ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/58-1

ք. Մեծամոր «31» հոկտեմբերի 2022թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Վահրամ Խաչատրյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արման-Երեմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Յուրիկ Ավետիսյանի, որը գործում է «Արման-Երեմ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայությունների պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5.984.000.00 (հինգ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ն (Կատարողի հավաստմամբ վերջինս չի հանդիսանում ԱԱՀ վճարող):

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտն Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Վաճառողը համաձայնագիրը կնքումև Գնորդին է ներկայացնում համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Մեծամորի համայնքապետարան	«Արման-Երեմ» ՍՊԸ
Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1	ք. Գավառ, Գ. Միքայելյան 19
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ Կամո մ/ճ
Հ/Հ՝ 1-16 չափաբաժինների մասով՝ 900332001628	Հ/Հ 2471800301213312
Հ/Հ՝ 17-19 չափաբաժինների մասով՝ 900332239434	
Հ/Հ՝ 20-37 չափաբաժինների մասով՝ 900332001503	
ՀՎՀՀ 04440608	ՀՎՀՀ 08414485
համայնքի ղեկավար---------- Վահրամ Խաչատրյան	տնօրեն ---------- Յու. Ավետիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«31» հոկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-22/58-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության							մատուցման	
Համարակալում	Գնումների պլանի համարակալման (CPV) ըստ ԳՄՊԼ կոդերի միջազգային դասակարգիչի	Անվանումը	Տեխնիկական բնութագիր	չափման միավորը	ընդհանուր գին՝ դրամ ՀՀ	ընդհանուր միավոր	հասցեն	Ժամկետը*
	50531140/55	Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի «Ակադեմիայի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի «Ակադեմիայի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	50000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
	50531140/56	Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի «Վարդանի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի «Վարդանի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	50000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
	50531140/57	Մեծամոր համայնքի Արտաշար բնակավայրի «Ախթամար» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Արտաշար բնակավայրի «Ախթամար» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
	50531140/58	Մեծամոր համայնքի Վարդանաշեն բնակավայրի «Գյուղի սկզբի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Վարդանաշեն բնակավայրի «Գյուղի սկզբի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
	50531140/59	Մեծամոր համայնքի Արազափ բնակավայրի «Զաստավի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Արազափ բնակավայրի «Զաստավի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

50531140/60	Մեծամոր համայնքի Արևիկ բնակավայրի «Հովիկի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Արևիկ բնակավայրի «Հովիկի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/61	Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի «Ճլլիկներ 2-րդ» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի «Ճլլիկներ 2-րդ» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/62	Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի «3-րդ փողոցի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի «3-րդ փողոցի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/63	Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրի «Գագիկի տան մոտ» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրի «Գագիկի տան մոտ» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/64	Մեծամոր համայնքի Տարոնիկ բնակավայրի «Տրուբի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Տարոնիկ բնակավայրի «Տրուբի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/65	Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի «Վալոդի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի «Վալոդի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/66	Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրի «Բաշնիայի» խորքային հորի ցանցի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրի «Բաշնիայի» խորքային հորի ցանցի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/67	Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրի «Ամարի» խորքային հորի վերականգնման աշխատանքներինախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Փշատավան բնակավայրի «Ամարի» խորքային հորի վերականգնման աշխատանքներինախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

50531140/68	Մեծամոր համայնքի Ջրաշեն բնակավայրի «Սարի տակի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Ջրաշեն բնակավայրի «Սարի տակի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/69	Մեծամոր համայնքի Ակնալիճ բնակավայրի «Կրակակետի խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Ակնալիճ բնակավայրի «Կրակակետի խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	60000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/70	Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրի Ղաչաղի խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրի «Ղաչաղի» խորքային հորի վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	80000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
5053114071	Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրի Բամբակաշատ-Նոր Արմավիր ճանապարհատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրի Բամբակաշատ-Նոր Արմավիր ճանապարհատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	320000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/72	Մեծամոր համայնքի Բամբակաշատ և Հայկավան բնակավայրերի Բամբակաշատ-Հայկավան ճանապարհատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Բամբակաշատ և Հայկավան բնակավայրերի Բամբակաշատ-Հայկավան ճանապարհատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	475000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/73	Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 8-րդ փողոցի ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 8-րդ փողոցի ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	475000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/74	Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Ալաշկերտ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	190000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում

50531140/75	Մեծամոր համայնքի Ամասիա բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Ամասիա բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	80000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/76	Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Արգավանդ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	190000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/77	Մեծամոր համայնքի Արևիկ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Արևիկ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	290000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
50531140/78	Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում	Մեծամոր համայնքի Բամբակաշատ բնակավայրի խմելու ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացության տրամադրում համաձայն կից Հավելված 1.1-ի	դրամ	450000.00	1	Մեծամոր համայնք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և Համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտի օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում
